



1843-1895 ՀԱՏՈՐ ԵՊ ՕԳՈՍՏՈՍ

ՀԻՆ ՀԱՒԱՏՔ ՀԱՅՈՑ

ՊԼ. ԺԱ. - ՀԻՄՆՔ. - ԳՈՒԵԱԿՈՒԹԻՒՆՔ, ՀԱՐՑՈՒԿ, ԵԱԲԱՐԴԱՆՔ

(Տես յ'էջ 289, 292)



ԻՒՍԻ պէս արմատական և աւելի հասարականուն մ'է առ մեզ Դիւթ, յորմէ Դիւթութիւն, և նոյնպէս սկզբնական իմաստն կամ ծագումն անծաւնոթ։ Բայն ձայնին և իրին՝ արժանի էր Դիւթի և Դից լծորդել. մերձաձայն առ օտարս՝ Եգիպտացոց հայկաւոր թորն է, գիւսից և արուեստից հեղինակ չատուած Բատ մեր վարդապետաց, « Դիւթ այն է՝ որ » ձեռք և նիւթովք գործէ. որպէս Գարի » և Ալիս և Ալազ և ջուր և Քար, և « Թզով չափէ »։ Ուրիշ մ'այլ աւելի համառօտ. « Դիւթ՝ որ զգարի և զալիւր և զուր » դիւթէ »։ Բայց բառը բայով բացատրելն (Դիւթ, գիւթէ) որոշ բան չիմացընէր։ Սակայն յիշեալ նիւթերն և անոնցմով գործէ բանն՝ յայտնէ, որ ինչպէս հիմայ այլ կ'ընեն անպարարք, նիւթերը կերպ կերպ կու

շարժեն, շարեն, բաժնեն, մէջը բան մի պահեն, և այլն. և անոնց անուամբ բարդեալ հմայութիւնք այլ զանազանին. որոց գլխաւորն է Հատրնկեցորդին կամ Հատահմայորդին, զոր Դաւիթն Ալազայ՝ « գլուխ գիւթութեանց » « պսոցիկ է Հատահմայութիւն », կ'ըսէ։ Հատ նշանակէ ընդդէն սերմանքն, ինչպէս ցորեն, դարի, և այլն. հասարակօրէն այս ետքինս գործածէին հմայողքն, որով և կ'ըսուէին Գարիդիսք կամ Գարրնկեցք. « որք ընկենուն հատս դարւոյ », կ'ըսէ գրուած մ'այլ։ Դիւթն ափով դարին կու նետէ կամ ցրուէ, և ընկած հատերուն դիրքէն գուշակութիւններ կ'ընէ. — Սյար նման են և Ալիս. Դաւիթն, որք ալիւր բերանով կու փչեն և գուշակեն. այս տեսակ գիւթութիւնը յիշէ թէ մի մութ բանիւ Եսայի վ. Նչեցի (ի մեկնութեան « Սիբեցից դքեզ Տէր ») Սաղմոսի.

Եզրիպտոսիցը կ'ըսէ իրենց քահանաները և Երազագէտները մարգարէ կոչէին, և կ'աւելցընէ, « և այն որ առ մեզ իսկ է, և ոչ » այլքն, որպէս ինչ Ալիարդիթքն, Գա-
 » ընդիթքն, Հարցուկքն և այլ այսպիսիք, որ-
 » պէս Հնչնչ ականչացն և մարմնեղ խաղաղ-
 » այլ յայսմ ամենայնէ օգուտ ոչ ինչ է, այլ
 » մանաւանդ զի ընդհարկէ զընթիւնս, որպէս
 » օրը վարին աստեղօք » — Ալիւր՝ յիշեցնէ
 զխմոր. այսով այլ զիւթողք եղած են, զոր
 խոնրարադք կոչած է հին վարդապետ մի,
 Սիմոն Աղձնեաց եպիսկոպոս անուանեալ,
 բայց կարծեմ Սիմոն կաթողիկոսն է յՐ դա-
 բու: — Հատընկեցութեան նման է և
 « Փայտ կամ Գար կամ Աւաղ կամ այլ
 ինչ ձգելն », ըստ մեկնչի միոյ (ի Գիրս
 Լուծմանց). և ամենն այլ միով բանիւ վի-
 ձակընկեցութիւն կ'ըսուին. որ հիմայ այլ
 յայսնի է յարեւելս և աւելի կանանց գործ: —
 Ասոնց նման և նոյն նիւթի ըլլան Քուշա-
 հարցութիւն և Քուշք հմայից, յիշեալն ի կա-
 զանկատուացի պատմէն՝ Հոնաց վրայ գրած
 ատեն: — Ասոնց կարգին կրնանք շարել
 կամ մտեցընել Մանդակունոյն յիշածներն
 այլ, « Աղ և Ածուղ, կամ Աւղենի առնուլ
 » կարմիր, և Երկաթ և Զուր, և Ոչուռն
 » Յուարից »... Դարձեալ կրնէ, զիւթողքն
 « Կոչն գիւհան յԱղ, յԵրկաթ, ի Զուր,
 » ի Նարոսու, յիշու, ի Գարի, ի յՈչուռն,
 » ի Մում, և ի Հէր պիտոյ, և յամենայն պղղ-
 » ծովութիւն »:

Այս յիշեալ նիւթոց մէջ գլխաւոր կամ
 իրր զօրաւոր և ազգու երեւին հմայողաց՝
 Երկաթն, Նարոսն որ և Աւղանի, այսինքն
 կարմիր և այլ գոյներով հիւտուած զերձանք
 կամ ժապաւնք. բայց ամենէն աւելի Զուրն,
 որոյ զիւթութիւնն կ'ըսուի Զուրյուտարք
 կամ Զուրյուտարքք, և պարզապէս Յու-
 տարք, Յուտարքիւն. և զործն յուտել, ը-
 սել է ջրով հմայել: Այս բառիս լծորդ է հա-
 սարակ բառն յուտրի, որ նշանակէ ջրով ա-
 ռատ, ջրարբի տեղի և ջրոտ բոյս: Զոյո հը-
 մայքն երկու կերպ էր, կամ պարզապէս ա-
 մանի մէջ ջուրը գննելով, և անոր մէջ ե-
 րեւցած զէմքը. և զի սովորաբար տափակ ա-
 մանի մի, կանքի մի, յակահի մի մէջ լը-

ցած ջրի վրայ կ'ըլլար զիւթութիւնն, զիւ-
 թողն կ'ըսուէր Հակահագհա, հարկ էր որ
 զործն այլ ըսուէր Հակահմայութիւն, թէ
 և չեմ հանդիպած ի զիրս այս բառիս: Իսկ
 միւս կերպն՝ հատընկեցութեամբ էր. այսինքն
 գարի կամ ուրիշ հատեր ձգելով ի ջուրն,
 կամ անոնց նման տրուեստիս շինուած հա-
 տեր, որ Ոչուռնք կ'ըսուին մեր լեզուաւ. ըստ
 աւանդութեան մեր հին պատմաց, Շամի-
 բամ նախ այս կերպով կու յուրթէր. կամ
 ըստ այլ աւանդութեան, յաղթուած ի պա-
 տերազմի՝ փախչելու ատեն իր պաճուճանաց
 ուլունքը նետեց ի ծովն Բլնունեաց (վանայ),
 ուսկից ծագեց առակն « Ուլունք Շամիրամայ
 ի ծով », ըստ խորեն. զոր այլաբանելով
 մեր օրերուս հռչակաւոր բանաստեղծ Պատ-
 կանեանի բանաստեղծ հայրն՝ Տէր Գարբիէլ՝
 գուսանօրէն երգած է: — Քրիստոնէութեան
 ատեն որ և է կերպով Ֆիացեալ ջրոյ հմայքն՝
 Զուր ազօրել կոչուած է: — Տեսակ մի
 ջրոյ հմայից կրնայ համարուիլ և այն սուտ
 կամ աղթարաց հաւատքն, որ արդիւլ զեկտ.
 ամոյ 29Ժ, « ի բաց ամանէ ջուր չի խմել
 » ի գլշերիս, վասն զի դեռ կու փսիսն ի
 » ջուրն, և որ խմէ՝ նա կու դիւհարի և
 » և կու խեւնայ, կամ կու առնուի », կամ
 զարնուի:

Յիշենք այս տեղ՝ որ Հմայից, զիւթու-
 թեան, կախարդութեան գործողութիւնները
 նշանակէ և Հէրերանք բառն, իբրեւ հը-
 նարք հմայից. եւս առաւել բժժական բառն
 կամ Բժժագործութիւն, ինչպէս անուանէ
 Շնորհալի հայրն մեր ի Թղթին առ Սամ-
 սատաղիս. բառին արմատն է բժիք և այ-
 սոր այլ՝ բժ, գուցէ լծորդ և թոյժն՝ յորմէ
 բժշկութիւն. վասն զի այս տեսակ հմայու-
 թեանց մէկ նպատակն այլ էր բժշկել, այս-
 ինքն բժշկութիւն հաւատացընել, որ և շատ
 ուրիշ տեսակ հմայից այլ պատճառ է. և ըստ
 Պլինիոսի (Լ. Ա), ամեն տեսակ հմայք և
 խտրութիւնք՝ բժշկական գիտողութիւններէ
 պատուէրներէ ծագած են: — Այս գիտմամբ
 յատուկ տեսակը հմայութեանց են՝ անձանց
 կամ մարդու մարմնոյ վրայ եղածքն, որ և
 է կերպով, և սովորաբար մասանց շարժմունքը
 գննելով. այս է Մարմնախաղ կամ Մար-

մնոյ խաղաղ կոչուածն, որոյ վրայօք երկար
գրուած և թարգմանուած սնտոի բաներ կան
ձեռագիր և տպագրեալ. որոյ մէջ եթէ պի-
տանի բան մի կայ՝ մարդակազմութեան դի-
տելիք բառերն են: Ըստ պխաւոր մասանց
մարմնոյ՝ առանձին անուամբ այլ կոչուին հը-
մայքն, ինչպէս Ալեքսիազ: Այսպիսի սոր-
տիքը յիշէ մեր հին Եզնիկ վ. այլ. « Յոր-
» ժամ՝ Ալեք խաղաչցեք բնական ազդեցու-
» թեամբ, վասն գնորոգ որ տեսանելոյ լինի՝
» ասեն՝ նշանակ, որք այնմ ստէպ միտ գնեն:
» Երբժամ յերանա կամ յայլ անդամ միս
» խաղաչցեք, նշանակ հեծանելոյ ուրուք է,
» ասեն, կամ հանդերձս ազնիւս ազանելոյ,
» կամ սիրելոյն պատահելոյ, կամ զան բւ-
» պելոյ: Նոյնպէս և յորժամ Ոտն կօխցե
» կամ Զեռն, մին ասեն ճառապարհի գնալոյ
» նշանակ է կամ Անձրեւի, և միւսն՝ առնելոյ
» ինչ: յուսեքէ կամ՝ առաջը՝ Դպրեղեւ և
» փեղեքն և Լեզուսին կօխ, և Ունկանն
» հարկանել, և Բարանին կօխ (կոկորդ), ոչ
» թէ յԱյսոյ իմեքէ լինի, այլ ի բնական
» ազդեցութեանէ անտի: — Եւ յորանջելն
» և ձգտիլն՝ ոչ ի դիւէ լինի, այլ ի մեղ-
» կութեանէ և ի թուլութեանէ՝ մարմնոյն... և
» ոչ փնջելն՝ ի հրեշտակէ, այլ կամ ի ցրտոյ
» կամ վասն այլ իրիք բնական ազդեցու-
» թեան: Նա և յՈգտոն հանել՝ երբեմն
» յիշատակաւ լինի և երբեմն առանց յիշ-
» լոյ զոր: »

Մարմնախաղի նման կրնանք կոչել Մար-
մնակապ, պարզապէս նապ կոչուածը, որ է
ըստ հմայից արգիլել կամ արձրկել որ և է
մարմնոյ մասանց շարժումը. և այս այլ ըստ
մասանց յատուկ անուններ ունի. ինչպէս,
Քնակապ, քունի մէջ թմրիլ տալ. իբրեւ
բացատրութիւն, « Նոր փեսայ կապել », որ ու-
րիշ տգեղ բառով այլ կոչուած է, ինչպէս՝ անօր
արձակման գրուածին մէջ « Հաբալն նստեալ
» ի յանհոր և յանջուր և յանեղեմն դաշտին.
» լայր զերդ զայրի և ողբայր զինչ զգերի, և
» ձայն ածել զինչ գանեղբայր քոյր: — Հրա-
» մայեաց տէրն.. թէ, Հաբալ, Էր ես նստել
» ի յանհոր ի յանջուր և յանեղեմն դաշտին.
» Էր կու լաս զերդ զայրի և կ'ողբաս
» զերդ զգերի », և ձայն ածել զինչ գանեղ-

» բայր քոյր: — Հաբալն արար պատասխա-
» նի, թէ ինչ ցեղ չի նստիմ ի յանհոր ի
» յանջուր և յանեղեմն դաշտին. ինչ ցեղ չի-
» լամ զերդ զայրի և չողբամ զերդ զգերի և
» ձայն ածել զերդ անեղբայր քոյր. երբ չի-
» ծնանին իմ յղիքն և չլիքնան իմ երբնճնի-
» քըն, և չի արձակեցան իմ զողբագեղքն: —
» Նա հրամայեաց տէրն.. թէ, մի նստել ի
» յանհոր ի յանջուր և յանեղեմն դաշտիլ. և
» մի լար զերդ զայրի, և մի ողբար զերդ ըղ-
» գերի, և ձայն ածել զերդ անեղբայր քոյր:
» Քո յղիքն ծնանեցան, և քո երբնճնիքն յղե-
» ցան, և արձակեցան քո զողբագեղքն: —
» Արձակեցաւ երկինք և արձակեցաւ երկիր. և
» արձակեցաւ ծառայն Աստուծոյ այս անուն, »
և այլն: — Լեզուակապ, որ է հմայելով մէկուն
լեզուն համարցընել կամ արձրկել, հմայողն
այլ կ'ըսուի Զար չեղոս. արձակման համար
սնտի աղօթք և բանք գտուին յաղթարաց
գիրս, և առանձին թղթոց և ծրարից վրայ
գրուած, որ Պահպանակք և Գրապահակք
կ'ըսուին, զոր յետոյ պիտի յիշենք. օրինակ
իմն. « Գայր երկինքն երկնաւորօքն, և գայր
» երկիր երկրաւորօքս. կու առնուր ի հոյն
» սուր և ի սրոյ հուր. և գնեն ի ասորոսս
» բանք բերանին ամենայն չարկամաց և չա-
» բախօսաց, Հայի և Տանկի և ամենայն
» միլաթի, թէ չկարեն խօսիլ... Կարկեսցին
» բերանք թշնամեաց և լեզուք չարախօսաց,
» անուամբն Աստուծոյ », և այլն: — Լե-
զուէն աւելի Ալեքսիապն, որ Ալխոսփ այլ
ըսուած է, և շատ յիշուած, ըստ զրոց է
Յաւադանք, ըստ ռամկաց Ալքիլի. թշնամու-
թեամբ կամ նախանձով ծուռ նայելով մէկու
մը վրայ՝ մանաւանդ տղայոց, որ շատ ազգաց
և մերոյն մէջ այլ ինչուան հիմայ լսուի, և
այնոր դարման սնտի հնարքներ ծանօթ են:
Հմայողն կամ ծուռ նայողն կ'ըսուի Զար-
ակն, որոյ դէմ այլ շատ սնտի գրուածք
գտուին. օրինակ իմն. « Անուամբն անեղին
» Աստուծոյ. գայր Զարակն, և որոտայր իւ-
» բու զամպ և զտիւծ, և գալարէր իբրեւ
» զօձ. տեսեալ զնա և ասէ. Ո՛ր երթաւ,
» պիղծ անիծեալ: Ասէ Զարակն. Երթամ
» զիւրեանց գործն խափանեմ. զեզն՝ ի լու-
» ծէն, զկոնն ի կըթէն, զմաքին ի կաթէն,

» զաղէկ մանուկն՝ հալեմ, զտղայն՝ ի մօր
» գիրկն չարարեմ՝ և մասեմ։ Ասէ ողորմ.
» մութեան հրեշտակն. կապեմ գըքդ կա-
» թամբ Ս. կուսին և ամենազօր խաչին
» Քրիստոսի, չորեքիկբայեան ամբողջն և
» չորս գլուխ աւետարանաւն, չորս տարե-
» բաւն, չորս կողմն աշխարհիս, չորս գե-
» տոգն, տասն մասամբ արարածոյս, որ ոչ
» մերձենաս ի ծառայս Աստուծոյ » : Աւելի
զուարճալի. « Չարակն՝ ի չար փուշն. չար
» փուշն ի բարկ կրակն. բարկ կրակն՝ ի քարն.
» քարն՝ ի յանդաւան ծոցն. ամենայն չար աչք
» և չար լիցուաւ չար խորհուրդ և չար զգայա-
» րանքն՝ պատառի և խաւար դառնայ ի դիմաց
» ծառայիս Աստուծոյ », և այլն : — Մեր
պատմութեան մէջ առաջին Չարակն կրնանք
կոչել զԵրուանդ, զոր ուրիշ տեղ այլ յի-
շած եմք. որ « ըստ հմայից դժնեայ գոյով
» հայեցուածով, վասն որոյ բնդ աշգանալ ա-
» շալլօցն՝ սովորութիւն ունել սպասաւու-
» րացն արքունի վէմն որձաքարեայս ունել
» ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն
» դժնէութենէ՝ ասեն պայթել որձաքար վի-
» յ մացն » :

Մարմնոյ զննութեամբ հմայութեանց կար-
գին համարելու է և թիւ դասաւորել կամ
թիւ չափել, ինչպէս հիմայ այլ կ'ընեն շա-
ղակարն հմայողք, ափի գծեր քննելով և
անոնց իրարմէ հեռաւորութենէն կամ մօ-
տութենէն, աւելի պակաս ըլլալէն՝ ստուտ-
մուտ գուշակութիւններ յարմարեն : — Ուրիշ
կերպ մ'այլ ձեռք և շարժամբ հմայութիւն
է Չեռնաճուրիչն, զոր զործելն Չեռն ածել
կ'ըստի, զործողն Չեռնաճուր, որ՝ սովորաբար
սողոց վրայ պէսպէս ձեւեր կ'ընէ ձեռքն,
շօշափելով կամ ոչ, իբրեւ անոնց բժշկու-
թեան կամ յաղողութեան համար. յիշէ զայս
և աւելի այլ Ալաւկայ որդին. « Այլ և
» Չեռնաճութիւն առնեն մանկանց տղայոց
» իւրեանց. առնն ոչ լինել ցաւ ի մարմինս
» նոցա : Այլ և բոլոր բերանայ իւրեանց ձե-
» դամբ մարձն զայնոսիկ. առնն, թէ յա-
» շաղկոտէ հիւանդացեալ է, և մի՛ առցէ
» զարձեալ յաշաղառն : Այլ և պատաւունք
» անօրէնք յօրանչն և ձկտռռն առնեն ըզ-
» հիւանդացեալ մանկամբն » :

Յաշաղանաց և Չեռնաճութեան մէկ տե-
սակ հմայութիւն է և փաթերակն, որ
պէսպէս գրուի, փայրերակն, փայրերակ
ասուոյ, փայրերակ անկանել, բայց որոյ
յայտնի չէ ինչ կերպ ընելն. հմայական նիւ-
թոց մէջ փաթերակն այլ յիշուած ըլլալով՝
փաթերակն այլ փաթթելով մի գուշակուի,
բայց միայն այնով չէ. յիշուի և փաթերա-
կն զմանկունս, որ յայտնէ ձեռնաճութեան
նման ըլլալը. յիշուած է յ'աղթարա և « փա-
թերակն ի բարձր տեղոյ », որ ցուցնէ
իբրեւ վախճանելով՝ բայց անվասն պահելով
վերէն ի վայր զլորել. ինչպէս հիմայ այլ
կ'ընեն անպարարք : Նոյն գրոց մէջ յիշուած
է և փաթերակոտ օր, փասակարի նշանա-
կութեամբ. որ և բուն փաթերակի իմաստը
կ'ընդարձակէ, և միշտ վտանգաւոր բան մ'ը-
նել և վտանգէ պահել կ'երեւցնէ :

Նիւթախառն հմայից կըրնայ վերաբերիլ և
խոտ հանելն, որ յիշուած է խրատական
գրուածի մի մէջ, Գիտ առնելոյ և Չեռն
ածելոյ հետ, և թուի խաբէական բժշկու-
թեամբ խոտեր փնտռել, կամ խոտերով հը-
մայել, մանաւանդ հրաշալի բուսեղիծօք, զորս
ի բնապաշտութեան յիշեցինք (ԾԲ. 97) :
Այսպիսի ինչ գրէ և Ալաւկայ որդին. « Ի
» բացցուտ արմատս բուսոց հասաննն, և լիցո
» կապեն ի ծառն տանձոյ և յայլ թուփ որ
» լինի զտեղեկան, և ասեն՝ թէ դեղ է
» Չեռնաճուրի » : — Ազրնագող այլ յիշուի և,
կարծուի իբրեւ տեսակ մի անպարար հմայող,
դերձան կամ թելեր իրարու խճճելով և
յետոյ անշիւթ և անխառնակ քաշելով. զուցէ
ուրիշ խաղախանք այլ նշանակէ այս բանս :
Ռամ կամ Ռամզարկոտիւն այլ կէս ամ-
պարարի¹, կէս հաշուով խաղի զործ մ'է.
Ռամզարկն իբր զիւթական գաւազանով կու
զարնէ կամ հասարակ նիւթոց կամ յատուկ
ձեւաւոր շինուած խաղաղկի գնտակաց նման
բաներու, և կամ անշայտ կ'ընէ, կամ յան-

1. Անպարար կոչուի փռ. Prestigiateur,
Թր. Օղջապագ. բայց և կախարհ և այլ աւելի
օտար մէկ մի համարուի երբեմն. վասն զի Ե-
րազհահանն ի մէկ կարգի դնէ՝ Սատանայ, Դեւ,
Արամգաւոր, Անպարար, Քաշք :

կարծ տեղափոխէ զանոնք. բայց իր գլխաւոր դործն է՝ այն փոքրիկ գնականներուն՝ որ կէտ (Նօքսա) կոչուին, դիրքը և թիւը համարել, և մոլորակաց ու քանի մի ուրիշ աստեղաց դրից յարմարցնել՝ աստեղացոյցի մի վրայ, և պէսպէս գուշակութիւններ բնել, և ասոնց համար իրբու ստոյգ դիտութեան երկար գիրք այլ գրուած է, 16 զլուխ կամ տուն, այսինքն Աստեղաստուն բաժնուած:

ԳՈՒՅԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Մարդուն ինքզինքը ճանչնալէն ետեւ՝ ամենէն կարեւոր գիտելիք իր հանդերձեալ կամ ապագայ կեանքն է. և եթէ հաստատ հաւատք մ'այլ ունի հանդերձելոյն կամ երկրորդ կենաց վրայ, ներկայիս տեսողութեան մէջ այլ երբեմն վերջի հանդիպելիքը, կամ դիպումսի մի ինչպէս կու տարուիլը, կամ որպիսի և է հոգ պատճառող կամ փափագած բանի մի յաշոգելը կամ չյաշոգիլը՝ կ'ուզէ գիտնալ. և ճանչնալով որ այս բանս իր բնական խելքէն և կարողութենէն վեր է, գերազոյն գիտութիւն ունողի մի կու դիմէ, կամ լաւ եւս զերազոյն էակի և անոր պաշտօնէից, կամ կարծեցեալ հնարագիտաց՝ զսոցազայն իմանալու ո՛ր և է կերպով. Հասարակաց է այս փափագ և զգացումն, ամենայն ազգաց և ամենայն կրօնից մէջ, ճշմարիտ կրօնից մէջ՝ մանաւանդ հին օրինաց՝ շատ անգամ յայտնապէս եղած են այսպիսի գերմարդկային գիտութիւնք կամ յայտնութիւնք, աստուածային ազդեցութեամբ, պէսպէս օրինակաւ, որ Ս. Գրոց պատմած, ներք գիտողաց ծանօթ է, և մեզի տեսլորդ այս տեղ բացատրելն. բայց միայն յիշեցրենք՝ որ ինչ որ ճշմարիտ կրօնից մէջ Աստուծոյ ազդեցութեամբ կ'ըլլար, սուտ կրօնից հետեւողքն այլ կ'ուզէին իրենց կարծեցեալ չաստուածներէն, ձեռամբ իրենց քրմաց, մագուց կամ ուրիշ աստուածատես համարեալ անձանց ձեռքով. Ուշիկ կրօնից մէջ այսպիսի բանից իմացողքն Աստուծոյ յատուկ շնորհքով մի՛ Տեսանող կամ Մարգարէ կոչուին. ինչպէս այն կրօնից ամեն հանգամանաց՝ հեթանոսք այլ մոլորութեամբ, խարդախութեամբ և կեղծեօք՝ ուզեր են նմանիլ կամ խաբել մէկ-մէկ, այսպէս ամեն ազգաց և կրօնից մէջ այլ եղած են յատուկ անձինք՝ մարգարէ

կամ գուշակող կարծուած, որոնք այլ եւ այլ անուամբ կոչուին, իրենց գուշակած բանին կամ գուշակութեան կերպին համեմատ. և որ արդէն յիշուեցան տեսակ տեսակ հմայից վրայ գրուածոյս. բայց այս տեղ կ'ուզեմք դարձեալ յիշել ամեն այս ցեղ՝ ըլլալիք բաներ առաջուց ըսողները, որ սովորաբար կոչուի Գուշակութիւն և յատկապէս Մարգարէութիւն:

Գուշակին՝ ըստ բառին նստազական մասնը, կամք՝ արմատը ցուցնէ գուշ կամ գոյշ, որ չի գտուիր առանձին ի գիրս, բայց եթէ գոյշ ըղձական մակբայ մի, և գոյշ բառն, որոյ հոմանիշ է. իսկ Մարգարէ շատ հեռաքննական է մեր լեզուի մէջ, որովհետեւ չունի նմանութիւն զայն նշանակող Յունաց և ամեն արեւմտեայց գործածած բառին, Προφήτης, Propheta, որ կանխասաց բնել է, այսինքն առաջուց ըսող զեւ չեղած բանի մի. իսկ եբրայական բառն Նաբի՝¹ աստուածագնացիկ, Աստուծմէ ներշնչուած նշանակէ, ուրիշ բառով այլ՝ Ռուհն՝ տեսանող. Արդ եթէ մեր բառն չէ նոյն ուրիշ լեզուի հետ (ինչպէս կարծեմ), բնել է որ ոչ միայն յատուկ է իրեն այս հին և քրիստոնէութենէ առաջ լսուած, և անով ճանչցուած ուրիշ հեթանոսաց գուշակաց, կանխասացից պէս մէկ մի, (Divinus, Vates). Ըստ դիպաց կամ մեզ անծանօթ ինչ ստուգութեամբ՝ Մարգարէ բառն թէ ձայնիւ թէ իմաստիւք նմանի միայն Լատինաց Mercuriusի՝², որ է ըստ Յունաց Հերմէս չաստուածն, որ թէ գուշակութեանց և պատգամաց չաստուած համարէր, թէ վաճառականութեան (Հայոց մէկ յատուկ բերմանց), արուեստից, գիտութեան, ճարտասանութեան, և այլն. նոյնպէս էր և Եգիպտացոց Էրամիս կոչուածն՝ մեծագոյն չաստուծոյ Ոսիրիսի խորհրդականն. — Մեր հին նախահայր ինչ համարէին զՄարգարէ. ինչպէս ասոնք գուշակէին, չեմք կրքնար գիտնալ ստուգութեամբ, մինչեւ բառին ծագումն ու ծուծն այլ չգիտնանք. Որպէս և

1. Նաբի արարեալէն այլ քիչոք նշանակէ:

2. Ոմանք համարին ի Mercurio բառէ այսպէս կոչուած, որ վաճառք նշանակէ:

ըլլայ՝ ինքն Մարգարէն որ ուրիշներու բան
յայտներ՝ հարկ է որ գիտցող ըլլար. այսոր
համար և կ'ըսուի Գէտ, գիտցող, որ և Գի-
տական, ըստ Յունաց Գνωστης, ըստ Լատի-
նաց Sciolus. — Տգէտը՝ անոնց կու հար-
ցնէին, անոնք այլ իրենց շատուածոց հար-
ցրել կարծեցնէին. այսոր համար այլ ը-
սուեցան Հարցուիք (β. Μάντις, Լ. Ha-
riolus, Vates). շատ հեղ այն կարծեցեալ
շատուածքն և անոնց տեղին (եթէ երեւելի
պատկեր չունէին) նոյնպէս Հարցուի կ'ը-
սուէր. ուր՝ ինչպէս հիմայ քրիստոնեայք
յ'ախտատեղիս, կու գիտէին հեթանոսք՝ ի-
րենց խնդիրները ստուգելու. և շատ հռչակ
կ'ունենար այն տեղը՝ ուր աւելի ստոյգ և
յաշոճ պատասխան և պատգամ կ'ընդունուէր,
ինչպէս առ Յոյնս Դելփիս, Դոդոն. հօս Ա-
բամազդն էր պատգամատու, հօն Ապոլոն,
որոյ Հարցուիքն այլ կանայք էին, Պիտրիա
կոչուած, հանդէսքն այլ Պիլիթիականք, պատ-
գամախօս ոգիքն Պիտրոնք, մեծ պատգամա-
տուն (Ապոլոն) Պիտրոս: — (Արդեօք մեր
հին Հայոց յիշած պաշտօնատեղին Քուր
(Եթ. տ. 103) այլ՝ այս անուան նմանութե-
նէն դատ՝ յարնչութիւն այլ ունի). կամ ա-
նոնց գլխաւոր պատգամախօսն չէր Տիւր յաւ-
տուածն, ինչպէս յիշած ի եմք կարգի գրուածիս
(տ. 100): — Խաբերայ Պիլիթայքն, Հար-
ցուիքն և քուրիք՝ իրենց եկողները հատա-
ցընելու համար՝ շատ հեղ վախցընելու կեր-
պեր հնարէին, ձայներով, որոտմամբք, շարժ-
մամբք և կերպարանքնին այլայլելով, փրփրա-
լով, թապլլտկելով, և այլն, ինչպէս ստորա-
գրեն Յոյնք և Լատինք իրենց համար. նոյնպի-
սի երեւոյթք նշմարեցինք մենք այլ ի Քուլթ և
ի Պաշտոնոյ (Եթ. տ. 103). անշուշտ ուրիշ
կողմեր այլ այսպէս էին. և թէ ոչ այնքան
յայտնի և շատ ահաւոր կերպով և այլ մա-
սամբ՝ խաբեբայք նա և ի քրիստոնէութեան
դարս ըրած են իրենց հաւատացողներուն, և
ինչուան վերջի դարեր (գուցէ և հիմայ՝ գը-
տուին ի Հայս պիլիթիանման պառաւք ան-
պիտանք, որք Ընկեաւոր կամ Ընկուոր կո-
չուին, այսահարաց և լուսնոտաց պէս գետնի
վրայ ընկնալով և քաշքշուելով՝ Այսպիսի
անշնորհք և իրենց սեռին շատ անխել

գործ՝ առ հինս և օտարս այլ կանանց մէջ
յաճախեալ է, հարցընողն այլ հարցուողն
այլ շատ հեղ կանայք են. Հարցուի արանց
տեղ մի ցուցինք՝ Քաջաց վրայօք խօսած ա-
տեն, Երուանդայ ի սահմանս վրահայոց հաս-
տատած Քաջատունը յիշելով, և հարցիկն այլ
Քաջաց գիտուն կոչուին. (Եթ. տ. 435-6).
— Եթէ աւելի հին մարգարէ փնտռել ուզէ
մէկն մեր երկրին կողմերը, աւանդութիւնն
կըրնայ յիշեցնել զԲիստոսեան Սիբիլայն,
զոր ոմանք Հայկական Սիբիլայս կ'անուանեն,
ոմանք այլ առաջին Սիբիլայս մարգարէու-
հեաց՝ զիկնն Յաբեթի:

Խաբէութեան և ստույթեան չափ և սահ-
ման չկայ. բարի բան մի չգիտցող և չկը-
ցողն՝ շատ մի սուտ կըրնայ հնարել. հետե-
ւի՝ որ շատ տեսակք այլ ըլլային ձեւացեալ
և հաւատացեալ ստույթեանց և անոնց պաշ-
տօնէից, այսինքն գուշակաց և հարցկաց:
Մեր նախնի ընտիր գրիչք և թարգմանիչք
կամ իրենց բնատուր ճոխաբանութեամբ կամ
իրենց հնազոյն նախնեաց պէսպէս ազանդ-
ները և մոլորութիւնները գիտնալով՝ տեսակ
տեսակ անուամբք կոչեն զանոնք. Եսայի
մարգարէ (Բ, 19) իր ազգը յանդիմանու-
թեամբ իրատեղով ըսած է, ըստ մեր թարգ-
մանաց. « Եթէ ասիցեն ցձեզ, խնդրեցէք
» զՎհուկս և Գփետեակոյս և ԳՉրախօսս և
» զՍրաւայեակոյս, ոչ իբրեւ զազգ որ յԱս-
» տուծոյ իւրով խնդրիցէ. զինչ խնդրիցեն
» վասն կենդանեաց՝ ի մեռելոց անտի »:
Հատինն կ'ըսէ միայն՝ Պիլիթոնք և հարցուիք
որք ճշն ի հմայ իրեանց, (Quærite a
Pythionibus et a Divinis, qui strident
in incantationibus suis), մերոց յոյն բը-
նագիրն՝ Որովայնախօսս, գետնակոյս, նախ-
րախօսս որք յորովայնէ գոչեն¹. Գէորգ Սիւե-
ռացի մեր հաւաքաբան մեկնիչն Եսայեայ՝ Ոս-
կիբերանէ և յայլոց, կու հարցընէ այստեղ.
« Զինչ է Վհուկ. զի իմն չար, որ յոր-
» վայնէ կանանց խօսի, և նոր իրօքն ջանայ

1. Ζητήσατε τοὺς ἐνγαστρεμύδους, καὶ τοὺς ἀπο-
ττὲ γῆς φωνοῦντας, τοὺς κεκοιμημένους, οἳ ἐν τῇς
κοιλίαις φωνοῦσιν.

» հաւատալի առնել զխաբէութիւնս . . . և տղեւոր
 » հաւատան թէ հմարիտ խօսի . յայմանէ
 » և Գետնակոչաց արուեստն հաւատալի թուի .
 » և Զքաթսոսացն՝ ընդ վայր խօսողացն՝ որ
 » յորովայնէն բարբառին . իսկ Ալիկոյն (հին
 » թարգման Ս . Գրոց) զՀաւագետս ասէ փո .
 » խանակ լինաց . իսկ Սիմարոս՝ զԷփեսոս՝ որք
 » ճանաչեցն . և թէ՛ ողորմոն՝ զԿաթսագետս ձա .
 » ցացեալս , այսինքն՝ ձաղուց պէս ճրոտու .
 » զեալս (կամ՝ ճրճուեալ) . թուի թէ և այս
 » զՄեռելահարացուկն նշանակէ , զի նոր
 » Քարբառովն վարմացուցեն Դեւք իբրեւ ըզ .
 » հաւս . զոր Եթմանաստեքն՝ Զքաթսոս ա .
 » ասցին » : — Նոյն բանը՝ Գր . Տաթեւացի
 իր վարդապետին (Թովհ . Որոտն .) մեկնու
 թեամբ գրէ . « Ոմանք ասեն՝ թէ Վհուկն
 » Հարցողքն են , որք լինէին պաշտօնեայք
 » կողմն , և ի նոցանէ՝ այսինքն ի կողմն՝
 » հարցանէին զլինելեացն : Գետնակոչն այն
 » է՝ որ ի ներքոյ կողմն կամ ի ներքոյ ծա .
 » ւոցն ծածուկ լինէր գետին , և յայմանէ
 » խօսէր դեւն . որպէս յորձամ՝ եկն Աղեք .
 » սանդր թափաւոր ի մահնանն արեգակնն
 » և լուսինն , և եհարց ի Կեանակոչէն : իսկ
 » Զքաթսոսն՝ ընդվայրախօսն է սրպէս Գա .
 » ըրնկէցն : իսկ Որոտնայնակոչն՝ այն է՝
 » յորձամ սպանանեն զարջառ կամ զօխար ,
 » ի սիրտն և ի թոքն և յայլան՝ դիւթեն
 » զշարժմունս նոցա : Դարձեալ վհուկն այն
 » է՝ որ շար գեւք ի կանայս մոտանեն և խօ .
 » սին ընդ որովայնս նոցա : իսկ այլ թարգ .
 » մանք փոխանակ լըհկացն՝ զՀաւագետն
 » են գրեալ . այսինքն , որք զձայնս ձաղուցն
 » և ազատուց և զայլոցն գիւթեն Եւ
 » Որովայնակոչն՝ որ գեւն մեանէ ի մե .
 » ւեալն , և նովաւ ընդ վայր սուտ բարբա .
 » ւէր » :

Ապագայն գիտնալ ուզողաց փափագին
 նայելով՝ որ ի՞նչ այլ կ'ըսուի մեր ընդուաւ ,
 գուշակողքն այլ ի՞նչք և Ըղճապատուսք ը .
 սուած են , ըրածնին և լուսնին այլ Ըղ .
 ճոտրիւն . և բառէն կարծուի որ բարի կամ
 յաջող բաներու գուշակութիւնք էին . սակայն
 թէ Ս . Գրոց թարգմանութեան մէջ և թէ
 մեր վարդապետաց հեղինակօրէն գրուածոց
 մէջ՝ ամեն տեսակ հմայից և գուշակութեանց

տեղ այլ այս բառս գործածուած է . ինչպէս
 ի գիրս Ա . Թ . Գր . Զ . 2 . « Կոչեցին այլաղ .
 » զիքն զգուրման և զիղճոն՝ զգէտս իւ .
 » բնանց » . — Դողոնի հարցիկին համար
 այլ յԵսեներիտն թարգմանութեան , « Դո .
 » ղովէտտաւ՝ ըզձաւ վարէին Յոյնք » : Մտ .
 գիտարոն՝ Սասնոյի և Սամուէլի պատմու
 թեան՝ մէջ՝ իր սովորական ճոխաբանութեամբ
 կ'ըսէ . « իղճք Էրիտոյ հմայից գիւթութեան
 » յարուցանեն զՍամուէլ » : Նմանապէս և
 Նարեկացին յԱղօթս (ՀՆ) եկեղեցւոյ հա .
 մար . « Օտարութիւն է ամենայնիւ դիցն
 » զըօշիւոց . . . քակտումն է յայտնապէս Ու .
 » բռնականաց Ըղճիցն անտառաց . . . Խոր .
 » տակումն է համայն գիւպպափոր Յռաքիցն
 » արձանաց » : Երկու ետքի խօսքերն ակն .
 արկեն ի բնապաշտութիւն : Յետին դարուց
 զըօշներէն թուլմա Մեծօփեցի՝ իղճք Աղօ .
 րաբան ստուգարանէ , այնու մտօք՝ ինչպէս
 յիշուեցաւ Զուր աղօթիւն :

Հեթմանոսաց հասարակաց շատ փափագելի
 գուշակութեանն էր՝ իրենց երազոց բլլալիբը
 խնդրել . սկսեալ ինք զինքը աշխարհիս տէր
 կարծող Նարուզողոտնօրէ՝ մինչև ի բանտար .
 կեալ ներքինին փարաւոնի , և մինչև ի յե .
 տին ոսմիկն : Տիր դից վրայ խօսելով յիշե .
 ցինք անոր Երազմոյն և Երազացոյց մահնանն
 և աւերեւն . եթէ ուրիշ Հայոց երկիրներում
 այլ չկային այնպիսի մահնանք՝ սակայն ե .
 րազագէտք շատ , աւելի շատ երազոց հա .
 տացողք կամ խաբուողք . շատութիւնն նոյ .
 նանիշ բառից պէսպէս գուշակելն այլ կ'ի .
 մացուի . իրն կ'ըսուի Երազահանադարիւն , Ե .
 րազադիտրարիւն , Երազամեկնարիւն , Երա .
 զատու ձեռնածոտրիւն , Երազահմայ յինչի .
 զուշակողն կամ հմայողն՝ Երազագէտ , Երա .
 զադատ , Երազադիտր , Երազահան , Երա .
 զահմայ , Երազացոյց , Երազընդհան : այս
 ետքի երկու բառերս կարողացին յԱզաթան
 գելոսի : Երազագէտք ոչ միայն խաբող էին ,
 այլ երբեմն և իրենք խաբուած , շատ հեղ
 ւայսպէս հասկացուի մէկ զըօշի մի (յովհե .
 փորիկս) բառն . « Երազահան՝ որ ի զիշերի
 » տեսանէ զդիւս և մարգարէութիւն պատ .
 » մէ՝ զի պատրաստեսցի » : — Յիշեցինք
 տեղ մի մեր աշխարհակալ Տիգրանայ գիւ .

բահաւանութիւնը, պէսպէս հմայից դիմելով Նարուզգոնծոսորի պէս. պատճառն էր երազ մի, յորում կարծէր որ բնդարձակ դաշտի մէջ սակի կու ցանէ. երազահոնք ինչպէս մեկնեցին, չեմ գիտեր. բայց ստոյգն այս է՝ որ լուկուլլոս և Պոմպէոս ժողովեցին իր ցանածները, և ինքնին Տիգրան անոնց զօրաւարաց և զօրաց միլիոններ պարգեւեց. իր և իր քեռայր Միհրդատայ գանձերով՝ գուցէ աւելի հարըստացաւ Հռոմ՝ քան ուրիշ աշխարհաց աւարներով. վասնզի անոնցմէ առաջ՝ տառնք (Միհրդատ և Տիգրան) աւերեր և աւարեր էին զարեւմտեան և զհիսպային Ասիա, ինչպէս իրենց հայրն և աներն Առտաշէս՝ զԹուոսաստան. որոյ նման երկուքն այլ, մէկն ինք զինքը սպաննելու ատեն, միւսն յազմուելէն և տիրած երկիրներն ետ թողլէն ետեւ՝ կրնային անոր պէս հաւաքել, « Աւաղ փառացս անցաւորի » : Այս խրոխտ և իր կառաց թագաւորներ լծող թագաւորաց թագաւոր (Տիգրան), չգիտեմ ո՞ր հին պատմիչի աւանդութեամբ, անգամ մ'այլ իր որդւոյն բժիշկներէն անձնարակ հիւանդութեան համար՝ դիմեց դարձեալ հմայողաց և գուշակաց. ասոնք ըստ տոլորութեան պատգամախօսաց՝ մոռն և երկիրմի խօսքերով՝ ըսին. « Բժիշկներէ յոյս չկայ. այլ թէ լուացուի տաք տաք առանց թրջուելու՝ կու բժշկուի » : այս պատգամն հասկնալու համար այլ նոր գուշակութեան պէտք էր. Տիգրան՝ տաք ու չի թրջուի մտածելով՝ տաք մորթով պատել տուաւ որդին և այնպէս լուանայ. սակայն օգուտ չեղաւ. յետոյ արեգակն տաք շողի տակ կեցուց և մրան տաքցուցած աւաղ թափել տուաւ. այսով բժշկեցաւ Գեղեցիկ գիւտ. որոյ նման համարելով ուրիշ շատ հին հեղինակաց պատմածներ և զիւրահաւանից խընդրածներն ի խաբեքայից, հեռանալով մեր ոճէն՝ հաճոյ համարեցանք յիշելը. միանգամայն և ի հաւաստիս, բայց ոչ պարծելի՝ այլ պախարակելի հաւաստիս մերազգեացս այլ զրախօսութեան և զրալլութեան երազական բանից. որոյ ուրիշ իրական հաւաստիք այլ են՝ ձեռագիր և տպագիր իշրագահանք. այնչափ կարեւոր և պիտանի համարուածք, որ Թերեւս ամեն հայերէն գրքէ առաջ տպա-

գրուած են, ժՁ դարուն սկիզբում, (ի վեհեստի), իսկ ձեռագիրք աւելի բնդարձակ գտուին, և էբբր երկու թերթ, թարգմանուած յարաբերենէ ռամկօրէն, յամի 1222, Անեցի Առաքէլ արեղայէ մի, (օգնութեամբ Զեչկանց Մխիթարայ Շիրակիւնեցոյ) : հեղինակքն Արաքացիք կոչուին խալախան և Սալբան, գրոցն համար կ'ըսեն, « Թուփառնուք է անուն գրիս, որ թարգմանի Առքէլիսու, և ճշմարիտ վիճակն և աղէկ... » 56 ցեղ երազ է, ու ամենուն մեկնու. » թիւնն գրած է ի յայս գիրքս, բարի ե. » ռազն ու չարն, և զամենայն մարդու որ » ինչ գալու է » : Անեցի գրաւորաց մեզի ծանօթ վերջին գրող և գրուած է սա, պիտանութեամբ այլ վերջին, բաց ի քանի մի բառերէն : Յաղորդ վարուց օրինակողք գրոցս՝ իրենց ժամանակին և տեղւոյն յարմարեցներ են Առաքելի լեզուն, կամ բառերը պարզեր են, աւելի կամ պակաս փոփոխութեամբ : Կան նաեւ բառագրոց կարգու բաժնուած Համաոտ իշրագահանք շատ անգամ տպագրուած Տամարաց հետ, իրեն մասն գուշակութեանց օղոց, անոնց հետ իրենց արժանի Մարմախաղացն այլ իգնատիտի մէկու մի, և Դաւիթի ճնուամբ գուշակութիւնք լուսաւորաց երեւման, խաւարման, շրջանի օրերուն, և այլն. և պէս պէս Աղրարք կամ Ախտարք, որ աստեղագիտութիւն կամ աստեղաց գուշակութիւն նշանակէ պարզապէս, բայց նոյն անուամբ կ'իմացուին և անտի բժշկական բանք և նուսխայք, որոց հեղինակ գրութի ճալիանոս, այսինքն Գալիենոս զգոն հին յոյն բժիշկն, և ոմանց՝ Կալիանոս ոմն կախարդ, իբր Ս. Յուստինեայ վարուց մէջ յիշուած Կիպրիանոս :

Այսպիսի գրուածոց մասին կամ առանձին մէկ հիւանդութեան մի դարմանի համար գրուածք, որ շատ գտուին, անոնց ստու գութեան հաւաստողք իրենց ծոցում կամ ի գրպանի կրելուն համար՝ Գրապանակք կ'ըսուին այլ և Պահարաք կամ Պահպանակք, իբր պահողք ի հիւանդութեանց և ի պատահարաց, վասն որոյ և Գիր պահպանութեան կամ օգնականութեան, կամ միայն Գիր, որոյ գրելն այլ՝ Գիր հանեք կամ

Գիր առնել, այլ լաւ եւս կոչէ մէկն՝ Այս
 յախօս քաղաքս: Մանգակունին կու գորշա-
 ցրնէ բռելով, « Պահարանք ի Սիմեոնիք ի
 կուսպաշտութիւն տանին » . երկրորդ բառն
 ի յունարէն՝ Շսթիյոյ բառէ՝ մանր նշխարի
 սփիկներ շշանակէ, որոց մէջ գնէին պահ-
 պանիչ նիւթիւր կամ գիրերն, որք և պղզ-
 տիկ ըլլալով՝ ըստ բանի Մանգակունայն, «
 կապէին ի ձեռնին և ի յակին և ի պա-
 » բանցի » : Սյապիսի փոքր բաներն եթէ
 տփով ըլլան, եթէ քսակի մէջ, և թէ այլ
 կերպով՝ Հմայեկք կ'ըսուին . որ է; հմայելու
 բանս՝ Երկար գրուածքն սովորաբար նեղ և
 իրարու կպացած թղթերու կամ մագաղաթի
 վրայ գրուած են, ինչուան 10, 20, 30
 եւ աւելի չափ (մետր) երկայն. գրուածքն մա-
 սամբ Ս. գրոց և օրինաւոր ազօթից բանք
 են, մասամբ հման վերայ գրելոցն սփեղ
 ցփեղ, շատոցն վրայ մէջ ընդ մէջ նկարած
 են և պատկերք տէրունականք և ծանօթա-
 զոյն Սրբոց (Լուսաւորչի, Ս. Սարգսի, Գեոր-
 ցայ, և այլն) բնորդմ պէսպէս հիւանդու-
 թեանց, պատահարաց և վտանգաց. կամ վը-
 նասակար կենդանեաց: Զոր օրինակ. « Երգ-
 » մնեցուցանեմ զ'666 ազգ Օձիցն, զգազա-
 » նաց, զսողնոց, զեռնոց որ զեռան ի վերայ
 » երկրի, որք հարկանեն և սկարացուցանեն
 » զամբարիկ. և երդմնեցուցանեմ զ'304 ազգ
 » կորն (կարիճ). երդմնեցուցանեմ զկորն և
 » զՄուրն և զգոլլախն և զկարիճն, և ըզ-
 » կուրն, որ ունի ի թիւնից սաստանայի:
 » Երդմնեցուցանեմ զհայր օձիցն և զամե-
 » նայն գազանաց, զիծն և զֆարբն », և
 այլն. և առանց ձանձրանալու 30 կամ 40
 տեսակ օձ յիշէ, հայ և օտար անուամբ,
 զուցէ զոմանս այլ զրոգն ստեղծած է. այս-
 պէս մանր ձիւններ, միջատներ, սողուններ
 այլ: — Ընդգէմ, կամ ի պահպանութիւն
 ի պատահարաց. « Փրկեա զծառայս քո, և
 » ամբածածուկ աջովդ քո պահեա զսա յա-
 » մենայն որոգայթից երեւելի և աներեւոյթ
 » թշնամոյն, ի սրոյ և ի հրոյ և ի յօղոյ
 » և ի ջրոյ, և ի հեղեղատէ, ի յընկղմանէ
 » ծովու, ի յորդահոսան գետոց և յարբիւրէ,
 » և ի բքարեղդ ձիւնէ, ի լեռնաստարափ
 » թնկմանէ, ի վիսազոր և ի թաւալազանաց

» քարէ. ի յորոտմանէ անպոց, ի շառափ-
 » նաթափ կարկտէ, ի յանկարծակի փայ-
 » լատակէ և ի հրարորբոք կրակէ, ի շարժ-
 » մանէ, ի ցասմանէ և ի պատերազմէ, փր-
 » կեա և պահեա », և այլն:

Յայտնի է որ մեր սուրբ կրօնքն այլ
 ներէ բարեպաշտից՝ վրանին կրել թէ՛ սրբա-
 զան բան մի, ինչպէս աւետարանի մաս մի
 կամ քանի մի խօսք, կամ ուրիշ հոգեւոր
 գրուած, և թէ՛ սրբազան նիւթ, ինչպէս
 Սրբոց նշխարք, եթէ օտկերքն ըլլան և եթէ
 հանդերձ, և այլն. բայց միայն այսպիսիք
 անխառն ի մտտի հմայեկան բանից. և ոչ
 քնու օտար նիւթ, նկար կամ ինքնահնար
 գրեր, ձեւեր, բառեր, և անծանօթ ու ան-
 էակ անձեր և անուններ. եւս առաւել աղ-
 տեղի քուրջեր կամ նիւթեր, լաւագոյն նիւ-
 թերու մէջ փաթեթած. որոյ համար կ'ըսուին
 փաթեթայք, Հէթեթանք, Հանգոցակք, և
 այլն. ինչպէս նախայիշեալ քորապաշտ և
 կրակապաշարն ի կողմանս Անձեւացեաց, և
 յետոյ եւս, ապին և առնուին քարախաժոր
 ծրար և փաթեթան, և « զեղս սխտական,
 » առ ի կատարել զպղծութիւնս ակտից...
 » մարդիկ աշխարհին սովորեալք անդ առ
 » քարին զեղերէին, առնել ի շատաւածոցն
 » ծրարս թարախածորս՝ ի պատճառս ակ-
 » տիցն, որպէս զծրարն նիւրիանոսի՝ առ
 » ի պատիւ Բուսարանայ կուսին », և այլն:
 Զասոնք Ննից Ս. Բարդուղիմէա. և յետոյ
 Հոփիսիմեանք և Լուսաւորիչն. բայց ցաւալի
 և ամօթալի է՝ որ զեռ յետոյ այլ մնացած
 ըլլան այնպիսի Դիզատոռք, ինչպէս կոչուին,
 (թէ և սովորաբար մահացու զեղ տուողք կ'ի-
 մացուին այս անուամբ): — Ալաւայ որպիսի
 իր ժամանակին անհաւատքն այլ յիշէ, որ
 հմայեկաց վրայ գրէին խառն անուններ դի-
 ւաց և հրեշտակաց և Սրբոց, « և այլ բա-
 » զում ոգեկորոյս և օտարացոցիչ յԱստու-
 » ծոյ բանս յօղեն և գրեն ի մագաղաթի,
 » իառն ընդ անուանն և բանաբաղ լինին
 » յաւետարանէն Գրիստոսի, և ի ներքս
 » խառնեն գրուք, զի կենաց բանին՝ զմա-
 » հացու բանն յսմարութեամբ առնուցուն. և
 » զայստիկ գրեալ լի մագաղաթի ծածկեալ,
 » կնքեն տէրունական խաչին. և առեալ

» գնեն ի դրոճի¹. այլ և կապեն ի բա-
 » զուկս և ի պարանոցս մանկանց խրեանց,
 » և անասնոց ձիոց և եղանց և ոչխարաց. և
 » Պահապանս կոչեն զայս »². Իսկ Մանգա-
 կունին կոչէ « Ժամուկս մտացածին բանից..
 » և զանունս որ ոչ լսի ի պատիրանս՝
 » զրաժս առնեն, և զանուն Քրիստոսի ընդ
 » նոսին արկանեն, զի զրաժն՝ աստուածական
 » համարեսցի » :

Անցեալ զարու կիսում Իգնատիոս վ.
 Զաղատեան ջուղայեցի, իր վարուց պատմու-
 թեան մէջ գլուխ մի բան այլ զրաժ է,
 « Վասն սովորութեան կանանցն արեւելեան,
 » մնացեալ ի հնոց ժամանակաց յօրէնս աշ-
 » խարհական, բարեւ առասպելք և ծիծաղե-
 » լիք » - յորոց համբէ կարճ բացատրութեամբ
 44 տեսակ, և աւելցընէ՝ թէ կան « Այլ
 » ինչ բանս ծիծաղելիք՝ որ ոչ կամեցաք զընդ
 » վասն առասպելութեանն » : — Մենք այլ
 իրեն հետեւելով՝ թողունք իր զրաժներն այլ,
 և ուրիշ շատեր՝ քան զոր աւելի գիտեն :

1. Ուրիշ օրինակ մի գրէ ի Իսպոքսի. ուրիշ
 մ'այլ. « ի ֆառոքեան. և զայն լնլմանս՝ զոր ու-
 » սոյց ստատանայ՝ դնեն անդ ի ներքս ի ծրարս
 » թաւութի և կապեն ի բազուկս », և այլն :

2. « Եւ յայս զանազան հմայութիւնս՝ խառ-
 » նեն որդն անկեալ ի վերք, որպէս ցեցդ է.
 » թովութեամբ ասեն արտաքս բերեալ » :

զուցէ և հնարեն այդ Արեւելեան կանայք,
 — զի նպրիանոս յԱղթարս՝ 6672 աղանդոս
 կանանց և կախարդաց », կ'ըսէ եղած կամ
 համարած. — նոյնպէս թողով յիշել և
 քննել ուրիշ աւելի անփաստ՝ այլ անօգուտ
 գրուածներ այլ, առանց հասկանալու պա-
 տուած և պահուած ի գիտնոց և յանգիտ-
 նոց, Եօթնագրեանք և վեցհազարեակ կոչուած.
 եւս առաւել սնոսի և խորական Ոչքարաւ-
 գիքն, որոյ հետեւողք կ'ըսուին Ոչքարաւ-
 տեսք և Ոչքարաւգէղ, որ երդմեցուցական
 և պահպանական աղօթք և աղճատանք են,
 և որ և է Բաղդ ճանչնալու կամ գտնելու
 ժամուկք և չնչմանք :

Աղթարք՝ ընդհանրապէս ախտից և հիւան-
 դութեանց վրայօք (որ միով անուամբ Գան
 կ'ըսուին) այնպէս զրեմ՝ իրր թէ կամաւոր
 կամ չար ոգիք ըլլան, և ասոնք՝ կերպ կամ
 կարծիք մի տան. ինչպէս տեսանք ի Շուտիկն
 (Երթ. տ. 434). որոյ հետ յիշեն զ'Գնայտն և
 Սողոմ, Էնթ, Աթիքէն, Գեռնապիտ, Աղոմ,
 սակ, Երիտանոն, Խոռիկ, Խոչուրդ, Ալքոնք,
 Մագիկ, Դիպուկ, Գորտնիկ, Խաղողիկ,
 Սեքոռչո, Խոռոքա, Խոցուոկ, Մարմնա-
 գոյն, և այլն. որոց շատն իրեւ տեսակք ցա-
 ւոց և ախտից յիշուին ի բժշկարանս : Բայց
 Աղթարաց լաւագոյն ըսածն այս է. « Զիք ես
 և ի չիք դառնաս... զեղ Յիսուս Քրիստոս լի-
 նի. ամէն » :

(Շարայարելի)

